

TK & PARTNERS

WEEKLY CLIENT ALERT



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԳԾԵՐԸ
2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ
4. ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ




# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԳԾԵՐԸ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՀԵՏԵՑԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ՝**

Արտակարգ դրության ժամանակ մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելու դեպքում սահմանել վարչական պատասխանատվություն՝ 300.000-500.000 ՀՀ դրամի չափով:

Մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդկանց զանգվածային հիվանդացում, պատժել տուգանքով՝ 300.000-500.000 ՀՀ դրամի չափով կամ կալանքով առավելագույնը 1 ամիս ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով կամ առանց դրա:

Մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելը, որն անզգուշությամբ այլ անձանց լուրջ առողջական խնդիրներ է պատճառել պատժել տուգանքով՝



500.000-700.000 ՀՀ դրամի չափով կամ 1-3 ամիս ժամկետով կալանքով կամ առավելագույնը 2 տարի ժամկետով ազատազրկմամբ:

Մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջները խախտելը, որն անզգուշությամբ այլ անձի մահ է առաջացրել պատժել ազատազրկմամբ 2-4 տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով:

Կորոնավիրուսով մեկ, երկու կամ ավելի անձանց, ակնհայտ հղի կնոջն կամ անչափահասին դիտավորությամբ վարակելը պատժել տուգանքով՝ 400.000-1.000.000 ՀՀ դրամի չափով կամ 1-3 ամիս ժամկետով կալանքով կամ 3-5 տարի ժամկետով ազատազրկմամբ:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից արտակարգ դրության ժամանակ սահմանված տեղեկությունների հրապարակման կամ տարածման սահմանափակումները խախտելու դեպքում տուգանել 50.000-300.000 ՀՀ դրամի չափով չափով:

Ավելին՝ [հղումով](#):





# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման դեպքերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացրել 2020 թվականի մարտի 16 -ից ժամը 18:30-ից սկսած մինչև ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարել Արտակարգ դրություն: Ստորև կներկայացնենք «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» որոշման և ՀՀ Պարետատան կողմից ընդունված փոխկապակցված որոշումների հիմնական դրույթները

ՀՀ մուտք և ելքի հատուկ կարգ՝ մասնավորապես, ռիսկային երկրներից օտարերկրացիների ելքի և մուտքի (ցամաքային կամ օդային եղանակով) արգելք, ՀՀ քաղաքացիների ցամաքային եղանակով ելքի անհնարինություն:

Որոշակի համայնքներ մուտքի ու ելքի հնարավոր սահմանափակում (ՀՀ Պարետի լրացուցիչ որոշմամբ):

Վարակի առկայության կամ կասկածի դեպքում մեկուսացման (ինքնամեկուսացման) պահանջ:

Առանձին հաստատություններ ԵՐՏԻ և մուտքի

սահմանափակումներ (մասնավորապես՝ զորամասեր, բանտեր, ծերանոցներ, մանկատներ, հոգեբուժարաններ և այլն):

20-ից ավել անձանց մասնակցությամբ հանրային միջոցառումների արգելք (մասնավորապես՝ ծնունդ, հարսանիք, հոգեհանգիստ և այլն):

Ուսումնական կանոնավոր գործընթացների դադարեցում (չի տարածվում հեռավար կարգով ուսուցման իրականացման վրա):

Մահմանափակում ՋԼՄ-ների համար՝ Վարակի վերաբերյալ միայն պաշտոնական տվյալների հղումով տեղեկատվության հրապարակման հնարավորություն:

Քրեական, վարչական պատասխանատվության հնարավորություն՝ մեկուսացման կամ ինքնամեկուսացման պահանջների խախտման պարագայում: Օրենքի փոփոխության նախագծերը քննարկվում են Ազգային Ժողովում,

Ավելին՝ [հղումով](#):

ՀՀ Պարետի լրացուցիչ որոշմամբ՝ 22.03.2020-ից սկսված Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվել են տնտեսական գործունեության հետևյալ տեսակները.

- Առևտրի կենտրոններ և մոլեր՝ բացառությամբ սննդի, խմիչքների, ակոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրության ապրանքների մանրածախ առևտրի գործունեության և մոլերում գործող սուպերմարկետների,

- Բարերի, գիշերային ակումբների, պարահրապարակների գործունեություն,
- Կինոֆիլմերի ցուցադրում,
- Խաղատներ, բուքմեյքերական և խաղազուգարով գրազի կազմակերպման գործունեության սպասարկման գրասենյակներ:

Ավելին՝ [հղումով](#):

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

### ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցվել է 0.25 տոկոսային կետով և այժմ կազմում է 5.25%: Նշված փոփոխությունը պայմանավորված է համաշխարհային տնտեսության վրա կորոնավիրուսի շարունակական տարածման բացասական ազդեցությամբ: Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումն ընդունվել է սույն թվականի մարտի 17-ին:

Ավելին՝ [հղումով](#):

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ԹՂԹԱՅԻՆ ՓՍՏԱԹՂԹԵՐ ՉԻ ԸՆԴՈՒՆԻՆԻ

Սույն թվականի մարտի 23-ից ՀՀ կենտրոնական բանկը դադարեցնում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից թղթային տարբերակով փաստաթղթերի ընդունումը: Փոխարենը, փաստաթղթերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային փոստով կամ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքի միջոցով: Կենտրոնական բանկի կողմից պատասխան գրությունները կուղարկվեն փաստաթղթերում նշված էլեկտրոնային հասցեներին: Թե մինչև երբ կգործի նշված սահմանափակումը, պարզ չէ: Իրավիճակի փոփոխման դեպքում Կենտրոնական բանկը հանդես կգա նոր հայտարարությամբ:

Ավելին՝ [հղումով](#):

## ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԾԱՆՈՒՑՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քննարկվում է հարկային մարմնի կողմից իր գործունեության շրջանակներում հարկ վճարողներին ծանուցումները էլեկտրոնային եղանակով տրամադրելու կարգը:

Այս կարգը չի տարածվելու հարկային ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հարկային մարմնի կողմից փաստաթղթեր ներկայացնելու վրա:

Ավելին՝ [հղումով](#):

